ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

2019 թվականի դեկտեմբերի **18**-ի

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 359

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 49-Ն որոշմամբ հաստատված Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի օգոստոսի 30-ի N 309 հրամանով հաստատված N 1 հավելվածի 3-րդ բաժնի 1-ին կետը, ինչպես նաև հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու և դրանց որակը բարձրացնելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտի կիրառումը պարտադիր է հարկային մարմնի՝ հարկ վճարողներին ծառայություններ մատուցող բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համար:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգչային ծրագրերի մշակման և սպասարկման բաժնի պետ Ս. Թամրազյանին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից երկօրյա ժամկետում ապահովել Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում (http://tax.nk.am) նոր՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» բաժնի ստեղծումը:

4. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային վարչարարության մեթոդաբանության և հարկ վճարողների իրազեկման բաժնի պետ Ա. Մուսայելյանին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից եռօրյա ժամկետում ապահովել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտի, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների տեսակների, իրականացման ժամկետների, տրամադրման ձևերի և ծառայությունների մատուցման վայրերի հասցեների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, ծառայության մատուցման ժամերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգչային ծրագրերի մշակման և սպասարկման բաժնին՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» բաժնում տեղադրելու նպատակով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ **Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2019 թվականի դեկտեմբերի 18

ք. Ստեփանակերտ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2019 թվականի դեկտեմբերի 18-ի
359 հրամանի

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ստանդարտը մշակվել է հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների հասանելիությունը, որակի բարձրացումը և ծառայությունների մատուցման ընթացակարգերի կիրառման միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու նպատակով:

2. Հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ են համարվում հարկային մարմնի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում հարկ վճարողների հաշվառումը (հաշվառումից հանումը), «Հարկային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հարկ վճարողների սպասարկումը, հարկ վճարողի պարտականությունների կամավոր կատարման ապահովումը, այդ թվում՝ հարկերի և վճարների վերադարձը, ինչպես նաև հարկ վճարողի դիմումի, հայտարարության և այլ փաստաթղթերի ընդունումը և դրանց համաձայն հարկային մարմնի կողմից իրականացվող գործողությունները՝ բացառությամբ հարկային պարտավորությունների կատարման ապահովման և հարկային մարմնի կողմից ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման վարույթների շրջանակում ներկայացրած դիմումների ընթացքի ապահովման գործողությունների:

3. Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները՝ խմբավորված ըստ տեսակների, իրականացման ժամկետների և տրամադրման ձևերի, ներկայացված են սույն հրամանով հաստատված N 2 հավելվածում:

4. Ծառայությունների մատուցումն իրականացվում է՝

1) հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,

2) հարկային մարմնի պաշտոնական կայքերի (tax.nk.am, online.tax.nk.am online.tax.nk.am/invoice) և e-taxpayer բջջային հավելվածի միջոցով:

5. Ծառայությունների մատուցման վայրերի հասցեների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, ծառայության մատուցման ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է հարկային մարմնի պաշտոնական կայքի http://tax.nk.am՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» բաժնում:

6. Հարկային մարմինը ծառայությունների մատուցումն իրականացնում է անվճար:

7. Հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հարկ վճարողների համար պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ և սեմինար-խորհրդակցություններ:

8. Ծառայություն մատուցող հարկային ծառայողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից հաստատված հարկային ծառայության՝ տվյալ պաշտոնի նկարագրով:

2. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

9. Հարկ վճարողներին մատուցվող յուրաքանչյուր ծառայություն պետք է համապատասխանի սույն բաժնով սահմանված չափորոշիչներին և կանոններին:

10. Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների չափորոշիչներն են.

1) ծառայության տեսակը (անվանումը)՝ մատուցվող ծառայության բովանդակությունը հակիրճ բնութագրող սահմանում,

2) ծառայության իրականացման ժամկետը՝ ծառայության իրականացման առավելագույն թույլատրելի ժամկետ,

3) ծառայություն ստանալու համար դիմելու և մատուցման արդյունքի տրամադրելու ձևը՝ ծառայություն ստանալու համար դիմելու հնարավոր եղանակները և ծառայության մատուցման արդյունքի տրամադրելու հնարավոր տարբերակները,

4) ծառայության մատուցման արդյունքը՝ ծառայության մատուցման վերջնական արդյունքը, որն իր մեջ ներառում է նաև ծառայության մատուցման մերժումը սկզբնական կամ ընթացիկ որոշ փուլերում,

5) ծառայության մատուցման իրավական հիմքերը՝ հարկային մարմնի կողմից ծառայությունների մատուցումը սահմանող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների հղումներ:

11. Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների կանոնները սահմանված են սույն հրամանով հաստատված N 2 հավելվածի՝ «Ծառայության իրականացման ժամկետը» սյունակում: Ծառայությունների մատուցման ժամերը ներկայացված են հարկային մարմնի պաշտոնական կայքի՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» բաժնում:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, կամ դատարան:

13. Ծառայության մատուցման վերաբերյալ հարկային մարմնի աշխատակցի և (կամ) նրա ղեկավար անձանց որոշումների, գործողությունների (անգործության) մասով բողոքները ծառայություն ստացողը կարող է որոշմամբ սահմանված դիմում-գանգատը անձամբ ներկայացնել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի քարտուղարին՝ քաղաք Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 16 հասցեով՝ ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ն, ընդմիջման ժամ՝ ժամը 13:00-ից մինչև 14:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

14. Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով ներկայացված դիմում-գանգատները հարկային մարմինը քննության է առնում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունում գրավոր դիմում-գանգատը հարկային մարմին մուտքագրման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից սկսած 30 օրվա ընթացքում: Առանձին դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, որի մասին իրազեկվում է դիմումատուն: Նշված ժամկետում

դիմում-գանգատի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում դիմում-գանգատը բավարարելու մասին հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված: